

10797

Число 35 и др. в
книжке 47
Число 35 и др. в

3200

11-11

A

ԽՍՀՄ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶՐԻՆՔՆԵՐԸ

3K107
Խ-11

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1984

09 DEC 2009
24 SEP 2006

ՅԻՔՈՍ

Խ-11
46

ԽՍՀՄ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԿԱՌՈՒՑՄԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

62182
ԽԻՍ



ԽՍՀՄ ԿԱՆ ԱՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

744

ՅԵՐԵՎԱՆ

1933

10842

10797



48923-65

Խմբագրեց Ս. Սարգսյան
Քարգամանչ Վ. Թերգիրաշյան
Տեխ. խմբագիր Գ. Զևնյան
Սրբագրիչ Մ. Գեղարզյան
Հանձնված է արտադրության 21 հունիսի 1933 թ.
Ստորագրված է տպելու 23 ոգոստոսի 1933 թ.
Փարմատ 5 1/2 x 8
Չետիբատի տպարան,

Գլավիտա № 8200 (P) Գատվեր № 1512 Տիրամ 1000

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ Ի՞նչ է կազմակերպությունը և նրա նպատակը

«Վերցնենք ժամանակակից բանակը: Ահա՛ կազմակերպության լավ նմուշներից մեկը: Յեվ այդ կազմակերպությունը լավ և միայն նրա համար, վոր նա ճկուն է, դրա հետ միասին ընդունակ լինելու միասնական կամք հաղորդելու միլիոնների: Այսօր այդ միլիոնները նստած են իրենց տանը յերկրի տարբեր ծայրերում: Վաղը զորահավաքի հրաման, և նրանք կհավաքվեն նշանակված կետերում: Այսօր նրանք պառկած են խրամատներում, պառկում են ամիսներով: Վաղը նրանք վեր կկենան և կգնան գրոհի: Այսօր նրանք հրաչքներ են զործում, թագնվելով գնդակներից և չրապլենից: Վաղը նրանք հրաչքներ կգործեն բաց կովում: Այսօր նրանց առաջապահ շրկատներն ականներ են դնում գետնի տակ: Վաղը նրանք ողաչունների ցուցմունքով գետնի վրա տասնյակ վերստերով առաջ կչարժվեն: Ահա սա՛ կոչվում է կազմակերպություն, յերբ հանուն մի նպատակի, վողեվորված նույն կամքով միլիոնավոր մարդիկ փոխում են իրենց հարաբերությունը և իրենց գործողության ձևերը, փոխում են գործունեություն վայրը և յեղանակները, փոխում

են գենքերը՝ համապատասխան կռվի փոխվող հան-
գամանքներին և պահանջներին» (Լեճիճ II Ինտեր-
նացիոնալի կրախր) :

«Ի պրոցում պայքարելու, փողոցում պրոպա-
գանդ մղելու համար մեծագույն նշանակություն
ունի յերեսայի գիտակցությունը, թե իր թիկուն-
քում կանգնած է իւրւմբը: Յերեսան չափահաս պրո-
լետարից ել ավելի պակաս կարող է մեն-մենակ
մղել իր յերկարատե պայքարը: Վոչ մի խմաստ չու-
նի խոսել յերեսայի հետ պայքարի և արիության
մասին, առանց ստեղծելու պայքարի համար ան-
հրաժեշտ պայմանները: Յերեսան պետք է ունենա
մասսայի զգացումը, նա իր կազմակերպության մեջ
պետք է տեսնի հենարան: Միայն վորպես կազմա-
կերպության անդամ, միայն վստահ լինելով իր
ընկերների համերաշխության վրայ, միայն խմբում
տիրող մասսայի վարակիչ ազդեցությամբ պրոլե-
տարական յերեսան կզտնի քաջություն և ինքնա-
վրստահություն, վորպեսզի հակառակ ամեն տեսակ
ծաղրանքների և նույնիսկ բռնի հարձակումների կա-
րողանա ցույց տալ իրեն վորպես կոմունիստ, ընդ-
դիմանա օեակցիոն ուսուցչին, հակաճառի տերտե-
րին և պատմության ուսուցչին, մերժի յերգել չո-
վինիստական յերգեր, կամ մասնակցել դպրոցական
չովինիստական տոնին» (Ե. Գերնյե, Կոմունիստա-
կան մանկական խմբեր) :

Ահա թե ինչո՞ւ համար է պետք կազմակերպու-
թյունը: Նա պետք է, վորպեսզի յուրաքանչյուրը
աշխատի մի ընդհանուր պլանով և յուրաքանչյուրը
իր տեղում կատարի վորոշ աշխատանք: Կազմակեր-

պությունը իր յուրաքանչյուր անդամին տալիս է
ուժ, վստահություն և տոկունություն:

Առանց կազմակերպության մարդը անզոր է և
անտղնական, նա կարող է վոչնչանալ պայքարում:
Այսպիսով, ընդհանուր նպատակին հասնելու կազ-
մակերպվելը մի կողմից համախմբում է մարդ-
կանց, նրանց դնում է վորոշ տեղում, տալիս է վո-
րոշ աշխատանք, և մյուս կողմից, — բարձրացնում
է կազմակերպության յուրաքանչյուր անդամի ակ-
տիվությունը, վստահությունը, կարգապահու-
թյունը և պատասխանատվությունը:

Կազմակերպության հիմնական կանոնները

Ամեն մի կազմակերպություն ունի իր նպատա-
կը, աշխատանքի պարզորոշ բովանդակություն,
կազմձևերը և մեթոդիկա, վորոնք կոչված են իրա-
գործելու այդ նպատակը:

Կազմակերպության նպատակը պետք է լինի
հստակ և պայծառ, վորովհետև նա՛ յե վորոշում
այն, վորին պետք է ձգտեն ավյալ կազմակերպու-
թյան բոլոր անդամները: Այդ նպատակը պետք է
հասկանալի լինի կազմակերպության բոլոր անդամ-
ների համար, այլապես չափազանց դժվար կլինի
ձեռք բերել գործողությունների միասնականու-
թյուն:

Նպատակից է բղիում աշխատանքի բովանդա-
կությունը: Նպատակին ավելի արագ հասնելու հա-
մար, պետք է նշել կոնկրետ խնդիրներ, վորոնք և
վորոշում են կազմակերպության աշխատանքի բո-
վանդակությունը:

Հետո գալիս են կազմակերպչական ձևերը, կազմակերպութեան ներսում պարտականութիւնները բաշխումը առանձին խմբերի և անդամների միջև:

Աշխատանքի մեթոդիկան բացատրում է, թե ինչ միջոցներով և յեղանակներով պետք է կենսագործվի աշխատանքի նշված բովանդակութիւնը:

Ինչպես տեսնում ենք անընդհատ, հետևողական կապ գոյութիւն ունի կազմակերպութեան այս չորս տարրերի միջև: Հաջորդաբար այդ կարելի չէ արտահայտել այսպես կազմակերպութիւնն ունի նպատակ, այդ նպատակին հասնելու համար նշվում են մի շարք կոնկրետ խնդիրներ, այդ խնդիրներն իրագործելու համար մարդիկ կազմակերպվում են վորոշ կերպով և այդ խնդիրները իրագործում են վորոշ յեղանակներով, մեթոդներով:

2. ԽՍՀՄ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՊՈՒԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Մինչև 1928 թ. ԽՍՀՄ պիոներական կազմակերպութեան կառուցվածքը բացատրող փաստաթուղթը հանգիստանում էր «Կազմակերպչական կանոնադրութիւնը», վորը մշակվել էր ՀամԼԿՅԵՄ կենտրոնի կողմից ՀամԼԿՅԵՄ 6-րդ համագումարից հետո: Այդ կանոնադրութեան հիմնական թերութիւնն այն էր, վոր նրանում վորոշվում էր ինչ միայն կազմակերպչական ձևերը: Մինչդեռ կազմակերպութեան մեջ մանուկ յերեխաները, ինչպես և վորզ կազմակերպութիւնը պահանջում էին, վորպեսզի կանոնադրութեան մեջ սեղմ, պարզ, յերեխաներին հասկանալի ձևով (բացի կազմակերպչա-

կան ձևերից) վորոշվեր աշխատանքի հիմնական բովանդակութիւնը, ա՛յն, ինչ կազմակերպութիւնը պետք է տա յերեխաներին, ա՛յն, ինչ պիոներները պետք է սովորեն կուլեկտիվում յեղած ժամանակ:

«Պ.պ. մանկական կոմունիստական կազմակերպութեան կանոնադրութիւնը խնդիր էր դնում իրեն սպաստիանել կազմակերպութեան այդ պահանջներին: Կանոնադրութիւնը բաղկացած է յերեք մասից—կազմակերպութեան նպատակը, աշխատանքի բովանդակութեան հիմնական դժերը և կազմակերպչական ձևերը:

Ի՞նչ է սովորեցնում Ուկրալինայի փորձը

Դեռ մինչև այժմ գոյութիւն ունի այն թեորիան, թե պիոներական կազմակերպութիւնը պետք է դեն նետի «սկառուներից վերցրած կազմակերպչական կառուցվածքը», և կառուցվի «չափահասների կազմակերպութիւնների ձևով»: Այդ թեորիայի սխալ լինելը պարզելու համար բավական է հիշել Ուկրալինայի փորձը:

ԽՍՀՄ մանկական կոմունիստական շարժման զարգացման սկզբնական շրջանում կազմակերպչական միասնական ձևեր չկային:

Ուկրալինայում պատ. պիոներների կազմակերպութիւնը կառուցված էր կոմյերիտական կազմակերպութեան նման: Կային մանկական բջիջներ, դումարվում էին կոնֆերանսներ, յերեխաների միջից ընտրվում էին կոմիտաներ և նույնիսկ աշխատանքի բովանդակութիւնը փոխ էր առնվում կոմյերիտի կողմից:

Ուկրաինայի կոմյեբիտմիությունը առհասարակ անթույլատրելի յեր համարում ոգտագործել սկաուտական շարժման մեթոդիկան յերեխաների կոմունիստական խմբերի աշխատանքում, և դրա համար նա անվերապահորեն ժխտում եր սկաուտիզմի այն մեթոդները, վորոնք մեր տեսակետից ամենից ավելի արժեքավոր են, և իր կազմակերպչական կառուցվածքի հիմքը ընդունում եր չափահասաների կազմակերպությունների աշխատանքի մեթոդները: Ուկրաինայում սլիտներչարժման գոյության առաջին տարիներում պատանի կոմկազմակերպությունները կուսակցության և կոմյեբիտմիության նման ունեյին իրենց բջիջների բյուրոները, կոնֆերանսները, դեկավար որգանները:

Մյուս սխալն այն եր, վոր Ուկրաինական կոմյեբիտմիությունը մանկական կոմունիստական շարժումը հիմնականում ծավալում եր մանկական հիմնարկներում (դպրոցներում, մանկատներում), համարելով նրանց «հենակետներ և սոցիալական դաստիարակության մեթոդների գործնական կիրառման վայրեր, և բացի այդ՝ մանկական հասարակայնության հիմնական կենտրոն» (Համառուկրաինական խորհրդակցության բանաձևը, 24 փետրրվարի 1924 թ.):

Ի՞նչ հետևանք ունեցավ կազմակերպչական նման կառուցվածքը:

Նախ, չնորհիվ այն բանի, վոր կազմակերպությունը ընդորինակում եր չափահաս կազմակերպություններին, նա չեր կարողանում կիրառել աշխատանքի կենդանի, հետաքրքրական, յերեխաների

տարիքին համապատասխան ձևեր և իր աշխատանքը կառուցում եր քաղաքական «ընթացիկ մոմենտի», «միջազգային և ներքին քաղաքականության գեկուցումների», «պարլամենտարիզմ, դեմոկրատիզմ» խաղալու վրա և այլն:

Յերկրորդ, մանկական հիմնարկների փակվածության, աշխարհից կտրված լինելու հետևանքով, Ուկրաինան անտես եր առնում Պ.պ. կազմակերպության հասարակական-քաղաքական բնույթը, կտրում եր նրան գործարաններից և Փարբիկաներից, գյուղի հասարակայնությունից, նա ստիպում եր կազմակերպությանը տապակվել իր սեփական յուղում:

Ուստի իրավացի յեր Ն.Կ. Կրուպսկայան, վորը դեռևս 1923 թ. գրում եր. «պատանի սլիտներների կազմակերպությունը չի կարող նման լինել չափահասների կազմակերպության, և շատ վատ կլինեք, յեթե նա լինեք չափահասների կազմակերպության պատճեն, այդ կլինեք կոպիտ սխալ և վորպես ծանր բեռ կընկներ մանուկների թույլ ուսերին»:

Դեռ 1924 թ. ոգոստոսին Համկոմկուսի (բ) Կենտկոմը միանգամայն ճիշտ կերպով բնորոշել և սլիտներական կազմակերպության կառուցման սկզբունքը.

«Պիտներների կազմակերպությունը պետք ե կառուցել ներքևից յերեխաների առողջ ինքնագործության և վերևից գործնական ամուր դեկավարության սկզբունքով, հաշվի առնելով հեղափոխական մանկավարժության վորձը և պահանջները: Անհրաժեշտ ե վճռականորեն պայքարել չափահասների

և կոմյերխտականների կազմակերպություններին նմանվելու, նրանց պարզապես ընդորինակելու պրակտիկայի դեմ թե՛ աշխատանքի բովանդակության և թե՛ կազմակերպչական ձևերի ասպարիզում»:

Կոլեկտիվը և դպրոցը

«Մանկ. կոմ. կազմակերպության նախնական բջիջը հանդիսանում է պատանի պիոներների կոլեկտիվը, վորը կազմակերպվում է կոմյերխտիության բջիջներին կից, հաստատվում է կոմյերխտիության կոմիտեյին կից պիոներական բյուրոյի կողմից» (Մանկ. կոմ. կազմակերպության կանոնադրությունը):

Պիոներական կոլեկտիվները կազմակերպվում են կոմյերխտիության բջիջների կողմից, վորովհետև մանկական շարժման բնույթը պահանջում է ղեկավարություն յերխտասարգության կողմից, վորը նոր է դուրս յեկել այդ տարիքից և կարող է ավելի հեշտությամբ, ավելի պարզ, ընկերական ձևով մտենալ պիոներին:

Կոլեկտիվները ստեղծվում և կազմվում են դպրոցներում, դպրոցական բջիջների ղեկավարությամբ:

Գլխավորապես դրանով է բացատրվում Համկոմկուսի (բ) 13-րդ համադումարի ընդունած այն վորոշումը, թե կուսակցությունը ղեկավարում է պիոներկազմակերպությունը անմիջականորեն կոմյերխտիության միջոցով:

Վերջին տարին պիոներական աշխատողների մի մասը լուսբաժնի աջակցությամբ առաջադրեց այն

հարցը, թե կոլեկտիվներ ստեղծելու հիմնական բազան պետք է լինեն դպրոցները, և վոչ թե արտադրական ձեռնարկությունները: Այս առաջարկությունը պաշտպանելու համար բերվեց միշարք պատճառարանություններ, թե մանկական կոմշարժումը և խորհրդային դպրոցը ձգտում են նույն նպատակների, թե դրանով հնարավոր է ընդգրկել յերեխաների միանման կազմ, թե դրանով դպրոցը մտենում է մանկական շարժմանը, նկատի ունենալով, վոր դպրոցական աշխատանքի մեթոդները ակտիվանում են և դպրոցների հասարակական-քաղաքական աշխատանքը յայնանում է և այլն: ՀամԼԿՑԵՄ կենտկոմը իր հատուկ վորոշումով ընդգծեց այս հանդամանքը և առաջադրեց այդ թեզը կազմակերպությանը: Այդ իրականացվեց 1932 թվի սեպտեմբերին սկսված պիոներական կազմակերպության կոմպլեկտավորմանը ըստ դպրոցների:

Ահա թե ի՛նչ է ստում այդ մասին Մ.Վ. Կրուպենինան:

«Մանկական շարժումը—դա այն ավանգարդն է, վորը դպրոցի էամար ուղի յե հարթում շրջապատի սոցիալական կյանքի մեջ մտնելու համար: Ահա թե ի՛նչ պետք է յինի այդ շարժումը: Վոչ թե դպրոցում պետք է պահել մանկական շարժումը, այլ ընդհակառակը, մանկական շարժման միջոցով դպրոցը պետք է դնել իր հեղափոխական բարձրության վրա—պետք է իրոք նպատակ յերեխաներին կոմունիստական դաստիարակություն տվող այդ հիմնարկի՝ դպրոցի զարգացմանը:

Կոլեկտիվի կառուցվածքը

Կոլեկտիվը պետք է միացնի մինչև 50 յերեխաների: Յեթե ավյալ բջիջին կից կազմակերպվում են նոր կոլեկտիվներ, ապա նրանք միանում են և կազմում են բազաներ (միայն քաղաքում)*, յուրաքանչյուր կոլեկտիվին թողնելով իր խորհուրդը» (Մանկ. կոմ կազմակերպության զանոնադրությունը):

Ինչո՞ւ կոլեկտիվում 50 հոգուց ավելի յերեխաներ չպետք է լինեն:

Վորովհետև պիտոներական կազմակերպությունը խճողված, ծանրաչարժ չպետք է լինի, այլ ճկուն, ընդունակ, շուտով հարմարվելու նայած աշխատանքին, նայած պայմաններին, նայած հանդամանքներին, վորպեսզի ուղած ժամանակ պիտոներական կազմակերպության աշխատանքը կատարվի արագ, ճիշտ և ուժերի խնայողությամբ: Դրա համար պիտոներկազմակերպության կազմակերպչական միավորը պետք է լինի փոքրաթիվ, վորովհետև վորքան ավելի փոքր է կազմակերպության հիմնական բջիջը, մանավանդ մանկական, այնքան ավելի ճկուն և աւելոր կլինի ամբողջ կազմակերպությունը:

Մինչև ՀամԼԿՅՅՄ. Ե-րդ համադրումարը կային կազմակերպություններ (Ուկրայինա, Անդրկով-

*) ՀամԼԿՅՅՄ Կենտրոնին կից Մանկկոմկազմակերպության Կենտրոնական Բյուրոյի սլենդումի վորոշումով հիմնովին վերանում են պիտոներական բազաները դյուրական կազմակերպության շրջանում:

(Խմբ.)

կաս և այլն), վորոնք ստեղծում էին կոլեկտիվներ, բողկացած անսահմանափակ թվով յերեխաներից: Իրենց առաջարկությունները պաշտպանելու համար նրանք ասում էին, թե «անհրաժեշտ է բոլոր յերեխաներին միացնել նույն կոլեկտիվում—այս առաջինը, յերկրորդ, —ղեկավարների պակասը ստիպում է ստեղծել նման լայն, համապարփակ կոլեկտիվ, քանի վոր կոլեկտիվում մի ղեկավար կարող է ղեկավարել միքանի հարյուր յերեխաների, յերրորդ—նման կառուցման պայմաններում հաջուցությամբ կարող է զարդանալ յերեխաների ինքնագործությունը, չորրորդ—«կոլեկտիվ» բառը հեշտությամբ է ըմբռնվում յերեխաների կողմից և համապատասխանում է կոլեկտիվի ամբողջ եյությանը:

Ամեն մի կովար իր սեփական փորձով հեշտությամբ կարող է ստուգել այս տեսակետի սխալ լինելը:

Մեր ղեկավարները իրենց պատրաստությամբ չեն կարողանում ինչպես հարկն է ղեկավարել հարյուրավոր յերեխաների: Ղեկավարից պահանջվում է, վորպեսզի նա ճանաչի յուրաքանչյուր պիտոների, իմանա նրա պահանջները, կարիքները, կարողանա բավարարել նրանց: 100—200 յերեխաներից բողկացած կոլեկտիվում նա չի կարող ճանաչել բոլորին, և հետևաբար չի կարող բավարարել նրանց պահանջները, անկարող կլինի ճիշտ կերպով դնել աշխատանքը կոլեկտիվում (ջոկատում):

Ընդունելութունը կոլեկտիվում

Պետք է կուրսը բռնել դեպի բանվորների և բառապահների յերեսանների յայն ներգրավումը պիտներական կազմակերպության շարքերում: Չնայած մեր կազմակերպության սոցիալական յայն բազային, վորը պետք է շատ ավելի յայն լինի, քան կոմյունիստիության մեջ, մենք չպետք է մոռանանք մեր շարժման դասակարգային եյությունը: Մյուս կողմից, մենք պետք է շատ հստակ կերպով նկատի ունենանք վոչ պրոլետարական խավերի յերեսանների ներգրավման անհրաժեշտությունը պիտներշարժման մեջ: Պետք է դադարեցնել ձայնադուրկների յերեսանների մեխանիկական գտումը, անդկացնել բացատրական յայն աշխատանք, թե ինչպե՛ս պետք է վերաբերվել ընակչության վոչ պրոլետարական խավերի յերեսաններին, թե ինչո՛ւ մեր կազմակերպության մեջ մենք պետք է վերադաստիարակենք մեզ խորթ դասակարգերի յերեսաններին:

Մեր կազմակերպության աճումը պետք է համարել հարձակում, արչավ դասակարգային թշնամու վրա, մի հարձակում, վորը խլում է նոր սերնդին նրա ազդեցությունից:

Պիտներական կազմակերպության սոցիալական կազմը ավելի յայն պետք է լինի, քան կոմյունիստիության մեջ: Ահա թե ինչու պիտներական կոլեկտիվներում ներգրավելով առաջին հերթին բանվորների և գյուղացիների (չքավորների և բատրակների) յերեսաններին, մենք նույնպես պետք է կոմյունիստիությունից ավելի յայն կերպով ներգրավենք

ընակչության վոչ պրոլետարական խավերի յերեսաններին:

Ահա թե ինչու կազմակերպչական կանոնադրության մեջ ասված է, վոր—«Պատանի պիտներների կազմակերպության մեջ ընդունվում են 10-ից մինչև 15 տարեկան բոլոր յերեսանները, վորոնք պատրաստակամութուն են հայտնում կատարել որեմքները, ակտիվ մասնակցել կոլեկտիվի (չոկատի) աշխատանքին և յենթարկվել կազմակերպության բոլոր վորոշումներին: Կազմակերպության մեջ կարելի յե մնալ մինչև 16 տարեկան հասակը: Առաջին հերթին ընդունվում են բանվորների և գյուղացիների—չքավոր և բատրակ—յերեսանները» (Մանկ. կոմ. կազմ. կանոնադրությունը):

Մեր մարտական խնդիրն է լինելու հարյուր տոկոսով ներգրավել պիտներ կազմակերպության մեջ բանվորների և կոլտնտեսական գյուղացիների յերեսաններին:

Կոլեկտիվի մեջ մտնողը պետք է ապացուցի, վոր նա այդ անում է անկեղծ և գիտակցական կերպով: Ամենից ավելի յավ այդ կարելի յե ապացուցել «ակտիվ մասնակցելով կոլեկտիվի աշխատանքին»: Դրա համար պիտներական ողակը, վորը հավաքում է նորեկների և կոլեկտիվի խորհրդից թույլտվություն և ստացել նորեկներին մի քանի շաբաթվա ընթացքում կոլեկտիվի մեջ ընդունելու մասին, այդ յերեսաններին մասնակից դարձնելով իր աշխատանքին, պատրաստում է նրանց հանդիսավոր խոստումը ընդունելու համար: Հանդիսավոր խոստումն ընդունելուց հետո «նորեկները» դառնում են իսկական պիտ-

ներ: խոստումն ընդունելու համար պատրաստվելու ընթացքում նորեկները պետք է ապացուցեն, թե վորքան հաստատ կերպով ցանկանում են լինել ակտիվ պիոներ և ձեռք բերեն պիոներից պահանջվող մի շարք գիտելիքներ և ունակութուններ:

Յուրաքանչյուր պիոներական բյուրո, նայած տեղական պայմաններին (ազգային հանրապետութուններ և շրջաններ, գյուղ և այլն) իր կազմակերպության համար սահմանում է այդ պահանջները:

Այստեղ մենք կրերենք պահանջների որինակելի մի նիմունք, վորոնք սահմանված են պատ. պիոներների կենտ. բյուրոյի կողմից և հրատարակված են «К работе по-новому» գրքում, էջ 90—92:

1. Գիտենալ և կարողանալ բացատրել, ո՞վքեր են պատանի պիոներները, պիոներների որենքները:

2. Կարողանալ բացատրել սալյուտի (վոդջուշնի), կրծքանշանի (զնաչոկ), վզկապի նշանակութունը և նրանց գործածության ձևերը:

3. Լինել գրագետ կամ անպայման սովորեց գրագիտության դպրոցում կամ պիոներկուլեկտիվի ողնությամբ:

4. Լինել մաքրասեր, կարգապահ և պարտաճանաչ:

5. Չխմել վոզելից խմիչքներ, չծխել և չհայհոյել:

6. Ներկայացնել սեփական ջանքերով չինված վորևե ոգտակար իր (դպրոցում, տանը, կուլեկտիվի արհեստանոցում, կամ այլ կերպով: Գյուղում այդ

կարող է լինել դյուղատնտեսական վորևե աշխատանք):

Կուլեկտիվից հեռացնելը

«Պիոներների հեռացումը կատարվում է կուլեկտիվի խորհրդի վորոշումով՝ կուլեկտիվի հավաքի կողմից հաստատվելուց հետո, որեմեները փտտեմատիկ կերպով խախտելու և պիոներական դիսցիպլինային չենթարկվելու համար: Հեռացնելուց առաջ անհրաժեշտ է, վորպեսզի ողակը, կուլարները մեռ առեմե ներգործության դաստիարակչական մեջոցներ (պարգել պատճառները, աշխատել նրանց վերացնել)» (Մ.Կ.Կ. Կանոնադրությունը):

Պետք է չափազանց զգույշ մոտենալ պիոներ կազմակերպությունից հեռացնելուն: Պիոների այս կամ այն արարքը վորոշելու համար անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել դրա գրգապատճառները, աշխատել վերացնել այդ պատճառները, ներգրավել նրան հետաքրքիր աշխատանքի մեջ, խոսել պիոների հետ, համոզել, բացատրել նրա արարքի վնասակարությունը: Ներգործության այլ պիոսի միջոցի, ինչպիսին է հանդիմանությունը, պետք է դիմել միայն ծայրահեղ դեպքերում, իսկ հեռացնելու հարցում է՛լ ավելի զգույշ պետք է լինել: Պետք է հեռացնել միայն այն դեպքում, յերր այլևս վոչ մի դաստիարակչական միջոց չի ազդում պիոների վրա:

Ի՞նչ բանի համար են հեռացնում պիոներ կազմակերպությունից: «Որենքները սխտեմատիկ կերպ

48923-65
59
878



պով խախտելու, պիտներական դիսցիպլինային չենթարկվելու» համար:

Պատանի պիտներների որենքները վորոշում են պիտներ կազմակերպության նպատակները: Յուրաքանչյուր պիտներ պետք է խորապես գիտակցի, վոր անհրաժեշտ է միշտ հիշել, անշեղ կերպով կիրառել այդ որենքները: Պետք է աշխատել, վոր յուրաքանչյուր պիտներ հասկանա, թե ինչու որենքները սիստեմատիկ կերպով խախտելու համար պիտները հեռացվում են կոլեկտիվից:

Պիտներական դիսցիպլինան խախտելու համար նույնպես հեռացնում են կոլեկտիվից: Սակայն այստեղ պետք է հիշել, վոր կոմունիստական դիսցիպլինան չի կարելի հիմնել «փայտի» վրա, վոր պիտներական կազմակերպության մեջ տեղ չպետք է ունենա կույր հնազանդությունը պետերին: Պետք է հիշել, վոր դիսցիպլինան հաստատվում է այն ժամանակ, յերբ աշխատանքը հետաքրքրում է յերեխաներին, յերբ դոյություն ունի պիտներական կուռ կազմակերպություն:

Ողակ

«Կոլեկտիվի (Չոկատի) վողջ աշխատանքն ավելի լավ տանելու համար, կոլեկտիվը բաժանվում է ողակների, ամեն մի ողակը 10 հոգուց: Ողակները կազմվում են ըստ կրթության (դասարաններում) և

ըստ ցանկության-ընկերության սկզբունքի» *) (Մ. Կ. Կ. կանոնադրությունը):

Աշխատանքը արագ կատարելու և ձկուն լինելու համար կազմակերպությունը չպետք է լինի մեծ և ծանրաչարժ: Դրա համար կոլեկտիվը բաժանվում է ողակների: Ողակները, ունենալով փոքր թվով յերեխաներ, ավելի լավ կկատարեն իրենց աշխատանքը և կկարողանան հարմարեցնել այդ աշխատանքը յերեխաների պահանջներին, հետաքրքրությանը և ուժերին:

Մի քանի ընկերներ առաջարկում են հիմք ընդունել «չարժական ողակներին» սիստեմը: Ահա ինչպե՛ս է պատճառաբանվում այդ տեսակետը:

«Ի՞նչ նպատակի յե ձգտում ողակը: Միատեղ աշխատելու և պիտներների ընկերական կապն ամրացնելու նպատակին: Ուրեմն պարզ է, վոր այս հիմնական նպատակին պետք է յենթարկել ողակներ կազմելու յեղանակը: Իսկ յեթե այդպես է, ուրեմն ողակների բաժանելը պետք է կատարվի նայած այն աշխատանքի տեսակին, վորին ձեռնարկում է կոլեկտիվը»: Յեվ այդ հաստատելու համար բերում են մի կոլեկտիվի որինակը, վորը հանձն եր առել անց կացնել «Անտառի որ»: Այդ աշխատանքն անց կացնելիս յերեխաների մի մասը հետաքրքրվում է այդ

*) Գյուղական պ. կազմակերպության կոմպլեկտացիոնումը կատարվում է նույն սկզբունքով, բացառությամբ այն սրայմանների, վոր յեթե գյուղը գտնվում է հինգ կիրճետք հեռավորության վրա այն դպրոցից, վորտեղ սովորում է պիտները, անհրաժեշտ է, վոր նա լինի իր գյուղի կոլեկտիվում:

գործի կազմակերպումով— յերեխաների, չափա-
հասների կազմակերպումը, յերեկույթներ, առա-
վոտներ սարքելը և այլն—և դրա համար կազմում և
կազմակերպիչների ողակ: Յերկրորդ խումբը հե-
տաքրքրվում է «Անտառի որվա» պրոպագանդով և
կազմում է պրոպագանդիստների ողակ: Յերեխա-
ների յերրորդ խումբը հետաքրքրվում է «Անտառի
որվա» անցկացման տեխնիկական աշխատանքով և
կազմակերպում է տեխնիկական կառարման ողակ
և այլն:

«Այսպես կազմակերպվելով յուրաքանչյուր
պիոներ, մասնակցելով կոլեկտիվի ընդհանուր աշ-
խատանքին, միաժամանակ կարող է կնտարել աշ-
խատանքի այն մասը, վորը ավելի համապատաս-
խան է իր ուժերին և հաճելի յե իրեն:»

Այս սիստեմը մենք կոչել ենք շարժական ողակ-
ների սիստեմ և կարծում ենք, վոր նա կատարելա-
գործում է ողակի աշխատանքը, ել ավելի հարմա-
րեցնում է յերեխաների հետաքրքրություններին,
հնարավորություն և տալիս փոքրերի և մեծերի հա-
մագործակցության, ամրապնդում է թե՛ ողակի և
թե՛ վողջ կոլեկտիվի ընկերական կապը»:

Այս տեսակետը սխալ է և չի կարող ընդունվել
ներկայումս պիոներական կազմակերպության հա-
մար: Մենք հող ենք տանում, վորպեսզի կազմա-
կերպությունը լինի կուռ, միաձույլ: «Շարժական
ողակների» սիստեմը վոչնչով չի կարող նպաստել
դրան: Այդ սիստեմը թալաղնում է կազմակերպու-
թյունը, վորովհետև ամեն մի նոր աշխատանքի ժա-
մանակ կոլեկտիվը ստիպված կլինի վերակազմվել,

վորը ժամանակ, ուժեր կխլի և զգալի չափով
կթուլացնի ղեկավարությունը, միաձուլությունը և
ընկերական կապը: Պետք է ուրիշ բան անել, այն է՝
վորոչակիլ բաժանել աշխատանքը ողակում, ըստ
խմբերի, հաշվի առնելով յերեխաների պահանջները
և ընդունակությունները: Այն ժամանակ կազմա-
կերպությունը թե՛ ամուր և թե՛ ճկուն կլինի, յերե-
խաները կստանան իրենց ուժերին համապատասխան
և իրենց համար հետաքրքիր աշխատանք: Սակայն
սա չի նշանակում, վոր յեթե մենք դեմ ենք շարժա-
կան ողակների, դեմ ենք նաև առհասարակ ողակ-
ների կազմի մեջ նպատակահարմար փոփոխություն-
ներ կատարելուն: Գործնականում յինում է այնպես,
վոր յերեխաները մի շարք պատճառներով աշխա-
տանքի պրոցեսում մի ողակից անցնում են մյուս
ողակը: Կարիք չկա արգելելու այդ: Բայց սա բո-
լորովին տարբեր է «շարժական ողակների» սկզբուն-
քից, վորը նշանակում է պարզապես ողակների բա-
ցակայություն և նրանց փոխարեն բավական անձև
խմբակների գոյությունը:

Ողակավարը և նրա ոգևականը

Ամեն մի ողակի գլխին կանոնաձև են ողակի կուլ-
մից ընտրված ողակավարը և նրա ոգևականը:

Ողակավարների ընտրությունը բոլոր կոլեկ-
տիվներում պետք է կատարվի միաժամանակ, տա-
րին յերկու անգամ:

Դա պետք է լինի կարևոր, մեծ կամպանիա բո-
լոր պիոներների և անկազմակերպ յերեխաների մաս-
նակցությամբ, յերբ ողակները գումարում են ի-
րենց կես տարվա աշխատանքի արդյունքները, յերբ

ամբողջ կազմակերպութիւնը ստուգում ե իր ղեկավար ակտիվը:

Ողակավարների ընտրութեան ժամանակ շատ կարևոր ե հաշիւի առնել, վոր անհրաժեշտ ե ողակների ղեկավարութիւնն ամբացնել լավագույն, ակտիվ, գործունեյա յերեխաներով բանվորների, բարակների, չքավորների ե կոլտնտեսականների յերեխաներից ե վարձով աշխատող պիոներներից: Վոչ թե լավ ճառեր ստող շատախոսներին, այլ գործունեյա յերեխաներին պետք ե դարձնել պիոներական հիմնական բջիջի-ողակի ղեկավարներ:

Ողակավարը չպետք ե ընտրվի անպայման տվյալ ողակի պիոներներից:

Կարելի յե ուրիշ ողակների ակտիվ յերեխաներից ընտրել: Այսպէս որինակ, փոքրերի ողակները իրենց համար ողակավար կարող են ընտրել մեծերի ողակից:

Վերջին տարվա աշխատանքը ցույց տվեց, վոր անհրաժեշտ ե յուրաքանչյուր ողակին ունենալ փոքր ե աշխատանքի մասնագիտութիւն: Այդ մասնագիտութիւնն ընտրվում ե ողակի բոլոր պիոներների ցանկութեամբ: Մասնագիտութիւնը կարող ե լինել աշխատանքի տարրեր ճյուղերից—ատաղձագործներ, հյուսներ, փականագործներ, ռադիսաներ, կլեքարտեսիսիկներ, թռչնարուծներ, անասնապահներ, բանջարարուծներ, տոպոգրաֆներ, սիգնալիստներ, կապի աշխատողներ ե այլն: Իր համար բնորոշով մի մասնագիտութիւն, ողակն ինքնուրույն կերպով աշխատում ե, վորպէսզի տվյալ ողակի բոլոր պիոներները վորքան կարելի յե լավ սովորեն

այդ արհեստը: Մա հսկայական չափով կրարճրացնի ողակների հասարակական արժեքը, մեծ ոգնութիւն ցույց կտա նրանց հասարակական աշխատանքում: Յուրաքանչյուր ողակ կարող ե այն ժամանակ կրել իր մասնագիտութեան անունը:

Ուրեմն, ողակը պիոներ կազմակերպութեան աշխատանքային հիմնական բջիջն ե: Ըստ ելութեան այնտեղ ե կատարվում կոլեկտիվի հիմնական աշխատանքը: Դրա համար ողակը պետք ե լինի սերտ կապերով գողված մանկական մի կոլեկտիվ, նա պետք ե ունենա լավ ղեկավարութիւն:

Կոլեկտիվի խորհուրդը

«Կոլեկտիվի գլխին կանգնած ե կոլեկտիվի խորհուրդը, վորը բաղկացած ե կոլվարից, ողակավարներից ե նրանց ոգնականներից, կոլեկտիվի նախագահից ե քարտուղարից: Կոլխորհուրդը ղեկավարում ե կոլեկտիվի ամենորայա աշխատանքը, ողակավարներին պատրաստում ե ողակային հավաքների համար, նշում ե աշխատանքի պլանը, ուղղութիւն ե տալիս ֆորպոստի աշխատանքին, անց ե կացնում անդամների բնդունելութիւնը ե հեռացումը» (Մ.Կ.Կ. Կանոնադրութիւնը):

Պիոներական կոլեկտիվների վերջին տարվա աշխատանքի պրակտիկան ցույց տվեց, վոր անհրաժեշտ ե արմատական փոփոխութիւններ մտցնել Մ.Կ.Կ. կանոնադրութեան այս կետում:

Ակտիվ մասնակցութիւն ունենալով սոցիալիստական շինարարութեան մեջ, կատարելով կուսակցութեան, կոմյերիտմիութեան ե խորհրդային

իշխանության հարվածային առաջադրանքները, կո-
լեկտիվները պահանջում էյին ձևում, հարվածային
ղեկավարութուն: Իսկ խորհուրդը իր խճողվածու-
թյան, ծանրաչարժության պատճառով չէր կարող
լինել նման ղեկավար: Պետք է նկատի ունենալ, վոր
ըստ կանոնադրության 50 պիոներներից բաղկացած
ամեն մի կոլեկտիվի խորհուրդում մտնում են 5 ողակա-
վարներ, 5 ողնահաններ, 1 կոլեկտիվի նախագահ,
1 քարտուղար, 1 կոլվար, 1 կոլվարի ողնահան, 1
հոկեմբերիկներ խմբի ղեկավար, ընդամենը 15
հոգի: Շատ կոլեկտիվներում այս թվին ավելանում
են 5 հոգի զանազան հասարակական կազմակերպու-
թյունների ներկայացուցիչներ: Հասկանալի չէ, վոր
վորեք շտապ աշխատանք կատարելիս նման խոշոր
մի ապարատ չէր կարող գործնական ղեկավարու-
թյուն ցույց տալ, մինչև վոր հավաքես նրան, մինչև
վոր հարցը քննես և այլն ժամանակը կանդնի:
Պարզ է տեսնել, վոր հարվածային աշխատանքներ
կատարելիս (պարկեր, ուտիլ-հումուլթ, յերկաթի
կտորտանք հավաքելը, ինդուստրացման փոխառու-
թյունը տարածելը) կոլեկտիվներում ստեղծվում
էյին հարվածային շտաբներ, բրիգադներ, հանձնա-
ժողովներ, պրտակարգ յեռյակներ և այլն: Նման
պայմաններում կոլեկտիվի խորհուրդին մտնում էր
միայն ընդհանուր, հաճախ ձևական ղեկավարու-
թյուն կոլեկտիվի նկատմամբ:

Հետագայում նման դրությունից խուլպափելու
համար անհրաժեշտ է փոքրացնել խորհուրդի կազմը և
հասցնել 6-8 հոգու, այն է՝ ողակավարներ, կոլ-
խորհուրդի նախագահը, պատի թերթի խմբիցի նպ-

խաղահը և կոլվարը: Կոլեկտիվի խորհուրդը, ինչ
կազմ էլ վոր ունենա, պետք է ընտրվի կոլեկտիվի
ընդհանուր հավաքում, այսինքն յուրաքանչյուր
թեկնածությունը պետք է քննության յենթարկվի և
ընտրվի անհատապես: Կարող է պատահել, վոր այս
կամ այն ողակավարը չընտրվի կոլխորհուրդի անդամ:
Ողակը դրանից կարող է հանել մի յեզրակացու-
թյուն, ա՛յն, վոր իր ողակավարը լավերից չէ:

Կոլեկտիվի խորհուրդը կոլեկտիվի ղեկավարն
է, նրա մարտական շտաբը: Նա լիովին պատասխա-
նատու չէ կոլեկտիվի կյանքի և աշխատանքի հա-
մար թե՛ պիոներների և թե՛ կոմյեբիտական բժիժի
առաջ: Սակայն կոլխորհուրդը վոչ միայն պետք է
ղեկավարի կոլեկտիվի աշխատանքը, նա պետք է
լինի կոլեկտիվի ակտիվի, կոլեկտիվի ղեկավարների
դպրոց: Կոլխորհուրդի յուրաքանչյուր հավաքը
պետք է վերջանա հրահանգչական պարապմունքներ
րով կոլվարի ղեկավարությամբ: Այս պարապ-
մունքների ժամանակ ակտիվը պետք է ստանա
գործնական անհրաժեշտ ցուցմունքներ կոլեկտիվի
առաջ դրված աշխատանքների համար, այստեղ
պետք է նշանակվի այն դրականությունը, վորը ող-
տագործվելու չէ աշխատանքի ընթացքում, այն-
տեղ ակտիվը սովորում է նոր խաղեր և յերգեր, ծա-
նոթանում է այլ կոլեկտիվների աշխատանքին, կաղ-
մակերպվում են հրահանգչական արչավներ և եքս-
կուրսիաներ և այլն: Մի խոսքով, այն, ինչ կոլխոր-
հուրդի դիրեկտիվների համաձայն պետք է կատարեն
կոլեկտիվը և ողակները, ղեկավարները նախորդը,
հնարավորության սահմաններում՝ պետք է գործնա-

կանորեն յուրացնեն կոլխորհրդի միջոցով: Կոլխորհրդի հրահանգչական պարասպմունքներին անհրաժեշտ է մասնակից դարձնել ողակավարներին ողնա-կաններին, կոլեկտիվային կամ ողակային այս կամ այն ձևով արհուլումների կազմակերպիչներին:

«... Կոլեկտիվի (Չոկասի) խորհուրդն ընտրում է՝ 1) կոլեկտիվի խորհրդի նախագահ, վորը հսկում և ոգնում է կոլեկտիվի խորհրդի վորոշումների կատարմանը, և կոլվարի հետ միասին ուղղութուն է տալիս կոլեկտիվի և ողակների աշխատանքին, և 2) խորհրդի քարտուղար, վորն պահում է կոլեկտիվի որագիրը և վարում է տեխնիկական աշխատանքը» (Մ. Կ. Կ. կանոնադրութունը):

Մինչև ՀամԿՅՅՄ 5-րդ կոնֆերանսը կոլխորհրդի ընտրովի նախագահ չկար: ՀամԿՅՅՄ 5-րդ կոնֆերանսում, հաշիի առնելով յերեխաներին երեկոց կազմակերպության ղեկավարման գործին մասնակից դարձնելու մեծ անհրաժեշտութունը, նշվեց, վոր անհրաժեշտ է «հաստատել կոլեկտիվի խորհրդի ընտրովի նախագահ վոչ միայն վորպես կոլեկտիվի նիստերին նախագահող, այլև վորպես կոլվարի իսկական ոգնական, վորը ընտրվում է յերեխաներից վորոշ ժամանակով» (ՀամԿՅՅՄ համամիութենական 5-րդ կոնֆերանսի թեզիսները):

Այսպիսով, պետք է ձգտել իրենց յերեխաների չըջանից դաստիարակել կոլվարի ողնականներ, տալով նրանց վորոշ հետաքրքիր աշխատանք կոլեկտիվի ղեկավարման ասպարիզում, խորհրդակցելով նրանց հետ աշխատանքի կազմակերպման մասին և այլն:

Հանձնաժողովներ և խմբակներ

«Անհրաժեշտության ղեկըրում հասարակական աշխատանքներ կատարելու համար կոլեկտիվը կարող է իրեն կից ստեղծել հանձնաժողովներ, վորոնք պարբերաբար վերընարվում են և աշխատում են կոլխորհրդի ղեկավարությամբ: Կոլեկտիվը ձգտում է ամբողջ աշխատանքը տանել ողակի միջոցով: Բացի այդ, կոլեկտիվին կից կարող են ստեղծվել կամավոր հիմունքներով խմբակներ, վորոնց մեջ ներդրավում են նաև վոչ պիոներները: Այդ ղեկըրում հանձնաժողովների նախագահները և խմբակների ավագները մասնակցում են կոլխորհրդի աշխատանքին» (Մ. Կ. Կ. կանոնադրութունը):

Մեքակների հարցի մասին կոլվարների միջև բախտական վեճեր են յեղել: Մի քանի կոլվարներ զանում էյին, վոր խմբակները խախտում են ողակային սիստեմը: Բայց ՀամԿՅՅՄ համամիութենական 5-րդ կոնֆերանսը իր վորոշումներում նշեց, վոր անհրաժեշտ է «աշխատանքի ձևերը հարմարեցնել բովանդակության (չլիսենալ խմբակների սիստեմից, աշխատանքն անց կացնել անհատապես և խմբերով), սովայն, սպահարկելով ողակների նախաձեռնարկ դերը կոլեկտիվում»:

Մեքակներում արժեքավորն այն է, վոր նրանց մեջ աշխատելու համար մասնակից են դարձվում անկազմակերպ յերեխաները, վորոնք հետաքրքրվում են աշխատանքի գանաղան տեսակներով: Այսպիսով, խմբակը կդատնա մի միջոց, վորով մանկական մասնակցը կհավարվեն կոլեկտիվի շուրջը և կըրացնեն պիոներ կոլեկտիվներին շարքերը:

«Ռայոնական, շրջանային, մարզային, հանրապետական և համամիութենական մասշտաբով բոլոր կոլեկտիվները միանում են պատանի պիոներների համապատասխան կազմակերպութ՝յունների մեջ ՀամԼԿՅԵՄ կից»:

Պիոներ կազմակերպության գործնական գեղավարման համար ԼԿՅԵՄ կոմիտեները իրենց կից ստեղծում են պիոներական բյուրո, վորն աշխատում է ՀամԼԿՅԵՄ Կենտկոմի կողմից մշակված հատուկ կանոնադրութ՝յամբ» (Մ.Կ.Կ. կանոնադրութ՝յունը):

Ինչո՞ւ անհրաժեշտ է պիոներ կազմակերպութ՝յան նման միավորումը:

Յեթե նման միավորում չլիներ, չափազանց գժվար կլիներ ունենալ միասնական, ամուր կազմակերպութ՝յուն: Առանց կենտրոնացված միավորումների, յուրաքանչյուր կոլեկտիվը կամ խումբը կաշխատեր պատահական կերպով, առանց վորոշ ծրագրի: Միայն կենտրոնացված կազմակերպութ՝յունը «ընդունակ է ճիշտ կերպով զարգանալ, կառուցվել միասնական պլանով, իրագործելով նույն նպատակները: Մանկական խմբերի կազմակերպչական կառուցվածքը նույնպես այնպես պետք է լինի, վոր պիոներ կազմակերպութ՝յան յուրաքանչյուր մասում ԼԿՅԵՄ-ը ամեն մի քայլափոխին զգա պիոներական կյանքի զարկերակը» (Վոլկով, «Как построена организация ЮП»):

Պիոներների որեմգները

«Մանակցողի անձնական կյանքը շարժման նպատակներին յենթարկելու համար սահմանվում են մի շարք բարոյական պարտավորութ՝յուններ (պատանի պիոներների որեմքները)» (ՌԼԿՅԵՄ 5-րդ համագումարը): Մեր մանկական կոմունիստական խմբերում յերեխաների առաջ կա դրված դրավիչ, վիթխարի մի նպատակ—փոխարինել կոմյերիտմիութ՝յանը, կառուցել կոմունիզմ: Սակայն բավական չէ միայն ընդունել այդ նպատակը, նրան հառնելու համար անհրաժեշտ են մի շարք վորոշ դործողութ՝յուններ: Այստեղից բղխում է այն, վոր մանկական կոմունիստական կազմակերպութ՝յան անդամները հանձն են առնում ունենալ միանգամայն վորոշ վարմունք (поведение) թե՛ դպրոցում, թե՛ տանը և թե՛ վորոցում:

«Պիոներների որեմքները պետք է կառուցվեն այնպես, վոր նրանք կարգավորեն յերեխայի վարմունքի հիմնական կողմերը, այսինքն նրանք, վորոնք ամենից ավելի եյական են ապագա կառուցող և մարտիկ դաստիարակելու պրոցեսում, և միաժամանակ հասկանալի յեն պիոներներին: Վարմունքի առանձին, ամենից ավելի եյական կողմերը կարգավորելու հետ միասին, որեմքները և սովորութ՝յունները յերեխայի մեջ պետք է դաստիարակեն լավը վատից ջոկելու չափանիշներ» (Կրուպենինա, «Պիոներ շարժման հերթական հարցերը»):

Արտաքին նշանները

Պիոներ կազմակերպության մեջ պե՞տք են արդյոք արտաքին նշանները: Այո, անկասկած պետք են: Արտաքին նշանների անհրաժեշտությունը մանկ-կազմակերպության մեջ ընդունել է դեռևս ԼԿՅԵՄ Ծ-րդ համագումարը: Մանկական շարժման մասին կայացրած վորոշման մեջ, թվելով նշանները և նշելով նրանց դերը, ասված է հետևյալը. «Յերեսխանների վրա պետք է ներգործել դասակարգային դաստիարակության մեջ հենվելով բնական կարիքների և հոգեֆիզիոլոգիական պահանջների վրա»: Յերեսխանները հաճույքով են զարդարում իրենց ժապավեններով, նշաններով: Արտաքին եֆեկտը, արտաքին տպավորությունները ուժեղ ազդեցություն են գործում յերեսխանների վրա, նրանք միշտ պահանջ են զգում վայլուն, գույնզգույն ձևերի:

ՆՇԱՆԸ (ՁՆԱԶՈԿ)

«Սահմանվում է միասնական մի նշան (կրծքանըչան) ԽՍՀՄ ամբողջ պիոներ կազմակերպության համար» (Մ.Կ.Կ. կանոնադրությունը):

«Նշանը տրվում է պիոներին վոչ վորպես պարզե, վոչ թե արժանիքների, վոչ թե փառասիրության համար, այլ վորպես սիմվոլ (խորհրդանշան) այն բանի, վոր պիոները պատկանում է վորոշ կազմակերպության, վորի մեջ մտել է կամավոր կերպով» (Կրուպսկայա «КСМ и бойскаутизм»):

«Նշանը կարևոր է նրանով, վոր նա սիմվոլականացնում է (խորհրդանշանում է) միաժամանակ ամբողջ պիոներ կոլեկտիվի նպատակը և գործու-

նեյությունը, մանկական կոմունիստական շարժման վողջ եյությունը: Նշանն ամրապնդում է կապը կազմակերպության և նրա անդամների միջև, ուժեղացնում է սեփական արարքների պատասխանատվությունը և ստիպում է պիոներին ամենուրեք հանդես գալ և վարվել վորպես վորոշ կազմակերպության անդամ, նշանը պիոներին յենթարկում է պրոլետարական հասարակայնության վերահսկողությունը» (Վոլկով, «Как построена организация ЮП»):

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՎԶԿԱՊԸ

«Քոլոր պատանի պիոներները կրում են կարմիր թաչկինակ վորպես վզկապ» (Մ.Կ.Կ. կանոնադրությունը):

Վզկապը նույն նշանակությունն ունի, ինչ նշանը: Հաճախ մեզանում քննվում է այն հարցը, թե պե՞տք է վզկապ կապել, թե վոչ: Վերևում մենք արդեն խոսեցինք այն մասին, թե ի՛նչ դեր են խաղում արտաքին նշանները: Ուրիշ բան է, յերբ չեն կրում այդ վզկապները: Այդ արդեն վատ է: Պետք է աշխատել, վոր բոլոր պիոներները վզկապ կրեն:

ԲՍՐԵՎ (ՍՍԼՅՈՒՏ)

«Պիոներների համար սահմանվում է հետևյալ բարևը. աջ ձեռքի հինգ մատները սեղմ միացրած բարձրացվում են գլխից վերև» (Մ.Կ.Կ. կանոնադրությունը):

Բարևը վողջունելու սահմանված նշանն է: Պիոները, պահպանելով առողջապահական կանոնները, պետք է աշխատի վերացնել ձեռք սեղմելու սո-

վորությունը: Բարևը վորպես վողջույնի նշան պետք է փոխարինի ձևաք սեղմելուն:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄ

«Սահմանվում է հանդիսավոր խոստման հետևյալ բանաձևը (Փորձուլան)».

Յես, ԽՍՀՄ պատանի պիոներ, ընկերների առջև հանդիսավոր կերպով խոստանում եմ, վոր՝

1. Ամուր կպաշտպանեմ բանվոր դասակարգի գործը ամբողջ աշխարհի աշխատավորների ազատագրության համար նրա մղած պայքարում:

2. Ազնիվ և անչեղ կկատարեմ Իլլիչի ավանդները—պատանի պիոներների որենքները» (Մ.Կ.Կ. կանոնադրությունը):

Հանդիսավոր խոստում տալիս է յուրաքանչյուր նորեկ, յերբ գործով ապացուցում է, վոր ուղում է դառնալ պիոներ: Հանդիսավոր խոստումը պետք է տրվի հանդիսավոր պայմաններում, վորպեսզի անջնջելի տպավորություն թողնի յերևանների վրա: Պիոներները միշտ պետք է հիշեն այն խոստումը, վոր նրանք արել են աշխատավորների հանդեպ:

ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ԴԵՎԻՉԸ

«Բանվորական գործի համար մղվող պայքարին յեղի՛ր պատրաստ»: Պատասխան, «Միշտ պատրաստ»:

Մեր ամբողջ դաստիարակչական աշխատանքը պիոներներին պետք է պատրաստի նրանց մարտականչը իրագործելու համար: Պիոներները միշտ, շարունակ, անչեղ պատրաստ պետք է լինեն, հա-

կառակ բոլոր խոչընդոտներին, պայքարել բանվոր դասակարգի գործի համար: Յեվ «Միշտ պատրաստ» պատասխանը պետք է հաստատի նրանց այդ մարտական պատրաստությունը:

4. ՊԻՈՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Ե ԱՐԴՅՈՒՔ ՀԵՂԱՓՈՒՍԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ

Մենք արդեն տեսանք, վոր պիոներ կազմակերպության կառուցվածքը յեղնում է յերևանների տարիքի առանձնահատկություններից, վոր նա չի ընդորինակում չափահաս կազմակերպություններին. սա մանկավարժության ամենակարևոր պահանջներից մեկն է:

«Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է նաև, վոր մանկական կոմունիստական շարժման ձևերը զարգացնեն յերևանների լայն ինքնագործությունը, չճնչեն, այլ առաջ բերեն յերևանների ակտիվությունը, լայն ասպարեղ տան յերևանի ուժերին, յեղ բաց անեն այդ ուժերի առաջ կոմյունիստիստիկան և կուսակցության առաջադրած լինելիքների կենսագործման յեղանակների ուղին»:

«Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է, վորպեսզի պիոներների ընդունելությունը կատարվի կամավորական սկզբուքով:

«Հեղափոխական մանկավարժությունը պահանջում է նաև, վոր մանուկների կազմակերպութան բոլոր ձևերը, ամբողջ կառուցվածքը բոլոր կողմերով դրավիչ և հետաքրքիր լինեն յերևանների համար»: Պիոներական կազմակերպությունը աշխա-

տավորների յերեխաներից առանձնացած ցանց չեւ
նա մասսայական ե, վորովհետեւ միայն մասսայա-
կան լինելով, յերեխաներին լայն ընդգրկելով նա
կկարողանա իրագործել իր կոմունիստական դաս-
տիարակչական ինդիւրները, կկարողանա պայքարել
պրոլետարիատին խորթ ազդեցութեան զեմ յերե-
խաների չըջանում:

Այս բոլոր տարրերը հիանալի և լրիվ կերպով
արտահայտված են պիոներական կազմակերպու-
թեան սիստեմի, կառուցվածքի մեջ: Բայց իհարկե
գործնականում դեռևս կան թերութեաններ: Համե-
նայն դեպս, պիոներ շարժման ամբողջ պատմու-
թեանը ցույց ե տալիս, վոր կոմյերիտմիութեանը
համառ պայքար ե մղել պիոներ շարժման մասսայա-
կանութեանը և գունազեղութեանը, պիոներների
ինքնագործութեանը մաքսիմալ չափով զարդացնե-
լու համար:

Մասսայականութեանը իր հերթին պահան-
ջում ե ձևերի միասնականութեան, իսկ մեղ մոտ,
ԽՍՀՄ-ում ձևերը ամեն տեղ միասնական են:

«Մանկական խմբերի կազմակերպչական ձևերը
պետք ե լինեն այնպես, վոր կոմյերիտմիութեանը
լիակատար, ամուր կազմակերպված ազդեցութեան
ունենա մանկական խմբերի վրա, որգանապես կապ-
ված լինի նրանց հետ վարից մինչև վեր: Պիոներ
կազմակերպութեան կազմակերպչական կառուց-
վածքը պետք ե հատուկ կերպով ցույց տա, վոր մա-
նուկների կոմունիստական կազմակերպութեանը
կոմյերիտմիութեան աշխատանքի մի մասն ե, վոր
յերեխաների չըջանում կատարված աշխատանքը
կոմյերիտականի պարտականութեաններից մեկն ե»:

Մանկական կոմունիստական կազմակերպու-
թեան մեջ վարից մինչև վեր իրագործվում ե կոմ-
յերիտմիութեան ղեկավարութեանը: Պատանի պիո-
ներների բյուրոները ԼԿՅԵՄ կոմիտեներին կից,
պիոներ կոլեկտիվները բջիջներին կից, կոմյերիտա-
կան կորվարները, կոմյերիտական կորիզը—ահա
կոմյերիտական ղեկավարութեան լծակները:

Պիոներ կազմակերպութեան կառուցվածքը
պետք ե լինի ճկուն, բնդունակ հարմարվելու բոլոր
հանդամանքներին և պայմաններին: Կոլեկտիվները,
ողակները լիովին ապահովում են այդ: Դրա հետ
միասին մեր կազմակերպչական կառուցվածքը յի-
վին հասկանալի յե պիոներների և յերեխաների
համար:

Մանկական կոմունիստական կազմակերպու-
թեանը իր վողջ սիստեմով դաստիարակում ե յերե-
խաներին ամուր, մարտական միասնականութեան,
իր գործի համար կոլեկտիվի առաջ պատասխանա-
տու լինելու, բանվոր դասակարգի գործի համար
գիտակից և համառ կերպով պայքարելու մարտա-
կան պատրաստակամութեան վողջով և գիտակցու-
թեամբ:

ՀԱՐՑԵՐ ԻՆՔԼՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ի՞նչ ե կազմակերպութեանը և ի՞նչ նպա-
տակ ունի:
2. Ինչո՞ւ պիոներ կազմակերպութեանը չպետք
ե նմանվի չափահասների կազմակերպու-
թեաններին:
3. Վորտե՞ղ պետք ե ստեղծել պիոներական
կոլեկտիվներ:

4. Ի՞նչ վերաբերմունք պետք է լինի դեպի վոչ պրոլետարական խավերի յերեխաների ընդունելությունը պիտներական կազմակերպության մեջ:
5. Ինչպե՞ս պետք է հասկանալ հետևյալը—կոլխորհուրդը կոլեկտիվի ղեկավարն է և կոլեկտիվի ակտիվի ղեպրոցը:
6. Ի՞նչ լրացումներ և փոփոխություններ պետք է մտցնել «Մ. Կ. Կ. կանոնադրության» մեջ պիտներական կազմակերպության վերջին շրջանի աշխատանքի պրակտիկայի կապակցությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рим, Кто такое юные пионеры.
2. А. Волков, Как построена организация ЮП
3. П. Керженцев, Организуй самого себя.

Բերում ենք այստեղ պիտներկազմակերպության կազմակերպչական կանոնադրության լրիվ տեքստը, փորպեսդի դուք մտածեք, թե ի՞նչ փոփոխություններ անհրաժեշտ է մտցնել այնտեղ:

Ձեր առաջարկություններն ուղարկեցեք մեզ (հեռակա կուրսերը):

ԼԵՆԻՆԻ ԱՆՎԱՆ ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆԵՐՆԵՐԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Լենինի անվան պատանի պիտներների մանկական կոմունիստական կազմակերպության նպատակն է յերեխաների կոմունիստական դաստիարակությունը, նրանցից կոմունիստական հասարակության ապագա կառուցողներ և մարտիկներ պատրաստելը:

Պատանի պիտներների կազմակերպությունը հանդիսանում է մանկական ինքնուրույն կազմակերպություն ԼԿՅՅՄ կից, կոմունիստական ընդհանուր շարժման յերրորդ ճյուղը, փոխարինողների փոխարինողը:

Պրոֆմիությունները, Լուսժողկոմատի, Առժողկոմատի և այլ որգանները ակտիվ մասնակցություն են ցույց տալիս պատանի պիտներների կազմակերպության զարգացմանը և ամեն կերպ ոգնում են կոմյերիտմիությանը յերեխաների մեջ նրա կատարած մասսայական աշխատանքում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ձի կարելի դաստիարակել կոմունիզմի կառուցողներ և մարտիկներ՝ պայքարից և շինարարությունից կտրված: Ուստի պատանի պիտներների

կազմակերպութեան հիմքում դրվում է յերեխաների անմիջական մասնակցութունը կուսակցութեան, կոմյերիտմիութեան և խորհրդային իշխանութեան հեղափոխական-չինարարական աշխատանքին: Պրտներկազմակերպութեանը և ամեն մի պիտներ հետևում են Լենինի կարեորագույն պատգամին— «Պետք է աշխատել, վոր ամեն ոք, ամեն մի քաղաքում, ամեն մի դյուղում յերիտասարգութեանը դործնականորեն լուծի ընդհանուր աշխատանքի խնդիրը, թող լինի ամենափոքրը, ամենահասարակը»:

Գիտելիքների, աշխատանքային և տեխնիկական գնահատութեանների տարածման համար մղվող պայքարը, աշխատանքը դպրոցում, շրջապատի կենցաղի առողջացման և բարելավման հոգսը, մասնակցութեանը պետական կազմակերպութեանների աշխատանքին յերեխաների իրավունքների և մանկական աշխատանքի պաշտպանութեան առաքարիցում, սլաքարը նկատվող անարդարութեանների և սեփականատիրական ձգտումների դեմ, աշխատելով, վոր կոյեկտիվի շահերը բարձր դասվեն յերեխաների անհատական շահերից, մանկական շարժման պրպազանդան, վորպես միջադրային կոմունիստական շարժման մի մասը, մասնակցութեանը կարեորագույն քաղաքական կամպանիաներին, յերեխաների ազատ ժամանակի խելացի կազմակերպման—ահա պատանի պիտներների կազմակերպութեան աշխատանքի բովանդակութեան հիմնական դժերը: Պիտներկազմակերպութեանը պետք է դառնա մանկական

մասաների հասարակական ոգտակար բոլոր ձեռնարկումների նախաձեռնողը և կազմակերպողը:

Աշխատանքը կատարելիս, թե՛ ամբողջ կոլեկտիվը, թե՛ ողակը և թե՛ անհատ պիտները պետք է ամեն ոք հաշի առնեն այն, ինչ սովորել են աշխատանքի հետևանքով: Պիտները ձգտում են լինել առողջ, դիմացկուն առույթ, համառ աշխատող, համարձակ, ուշադիր, շարունակ աշխատելով ձեռք բերել և յորացնել մարտիկի և կառուցողի համար անհրաժեշտ օժանկութեաններ և հատկութեաններ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՅԵՎ ՀԵՌԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Պատանի պիտներների կազմակերպութեան մեջ ընդունվում են 10—15 տարեկան բոլոր յերեխաները, վորոնք պատրաստակամութեան են հայտնում կատարել որենքները, ակտիվ մասնակցել կոլեկտիվի աշխատանքին և յենթարկվել կազմակերպութեան բոլոր վորոշումներին: Կազմակերպութեան մեջ մնալ կարելի յե մինչև 16 տարեկան հասակը: Առաջին հերթին ընդունվում են բանվորների և ջրավոր դյուղացիների յերեխաները և բատրակները:

2. Նոր պիտներների ընդունելութեանը կատարվում է կոլեկտիվի խորհրդի կողմից և հաստատվում է կոլեկտիվի ընդհանուր հավաքում:

3. Մի ամիս անց կոլեկտիվի խորհուրդը վորոշում է, թե՛ վորչափով նոր ընդունվողը ծանոթ է և կատարում է պատանի պիտներների որենքները և խնդիրները: Դրանից հետո յեկող հեղափոխական

տոնի ժամանակ—Մայիսի 1-ին, նոյեմբերի 7-ին, Մյուլդ-ի ուր և այլն նոր ընդունված բոլոր պիոներները հանդիսավոր խոստում են տալիս կուսակցության և կոմյերիտմիության ներկայացուցիչների ներկայութեամբ և միայն դրանից հետո նոր ընդունվողը կարող է կրել պիոներական վզկապ և կրճախան:

Պիոներներին հեռացումը կատարվում է կոլեկտիվի խորհրդի վորոշումով, կոլեկտիվի հավաքի կողմից հաստատվելուց հետո, որենքը սխտեմատիկ կերպով խախտելու և պիոներական դիսցիպլինային չենթարկվելու համար: Հեռացնելուց առաջ ողակը, կոլվարները պարտավոր են ձեռք առնել ներգործության դաստիարակչական միջոցներ (պարզել պատճառները, աշխատել նրանց վերացնել):

II. ՊԻՈՆԵՐ ԿՈԼԵԿՏԻՎԸ (ՁՈՎԱՏԸ)

1. Մանկական կոմունիստական կազմակերպության նախանական բջիջը հանդիսանում է Պ.Պ.Կոլեկտիվը, վորը կազմակերպվում է ԼԿՅՆՄ բջիջներին կից և հաստատվում է ԼԿՅՆՄ տեղական կոմիտեյի պիոներական բյուրոյի կողմից:

2. Կոլեկտիվը պետք է միացնի մինչև 50 յերեխաների: Յեթե նույն բջիջին կից կազմակերպվում են նոր կոլեկտիվներ; ապա նրանք կազմում են բազա, յուրաքանչյուր կոլեկտիվում թողնելով նրա խորհուրդը:

3. Կոլեկտիվի աշխատանքը ղեկավարելու համար ԼԿՅՆՄ բջիջը նշանակում է մի կոլվար, նրա ողնականը և մի շարք ընկերներ զանազան գյուղե-

րում որգանական աշխատանք տանելու համար: Բազայի աշխատանքը ղեկավարելու համար ստեղծվում է բազայի խորհուրդը, վորը ղեկավարում է բազայի ամբողջ աշխատանքը և վերընտրվում է 6 ամիսը մի անգամ:

Բազայի խորհրդում (խոշոր բազաներում, յերեք կոլեկտիվից ավելի) մտնում են. 1) նախագահը և քարտուղարը, վորոնք ընտրվում են բազայի հավաքում, 2) կոլեկտիվների նախագահները և քարտուղարները, 3) Փորպոստի նախագահը և քարտուղարը և ամբացված դպրոցները, 4) ԼԿՅՆՄ բջիջի ներկայացուցիչը, 5) խմբակների ավագները: Իսկ մանր բազաներում (2—3 կոլեկտիվ) ողակայինները:

Բազայի խորհուրդը պարբերաբար գումարում է բազայի հավաքը բազայի հարցերը լուծելու համար:

4. Կոլեկտիվի գլխին կանգնած է կոլխորհուրդը, վորը բաղկացած է կոլվարից, ողակավարներից և նրանց ողնականներից, կոլեկտիվի նախագահից և քարտուղարից, վորոնք վերընտրվում են 6 ամիսը մի անգամ: Կոլեկտիվի խորհուրդը ղեկավարում է կոլեկտիվի ամենօրյա աշխատանքը, պատրաստում է ողակավարներին ողակային հավաքների համար, նշում է աշխատանքի պլանը, ուղղություն է տալիս Փորպոստի աշխատանքին, կատարում է անդամների ընդունելությունը և հեռացումը:

5. Կոլեկտիվի խորհուրդն ընտրում է. 1) կոլխորհրդի նախագահ, վորը հսկում է ողնում է կոլխորհրդի վորոշումների կատարմանը և կոլվարի հեռմիասին ուղղություն է տալիս կոլեկտիվի և ողակների աշխատանքին, 2) խորհրդի քարտուղար, վոր-

ըր վարում ե՛ կոլեկտիվի որագիւրը և տեխնիկական աշխատանքը:

6. Հարկ յեղած դեպքում կոլեկտիվային ընդհանուր աշխատանքները կատարելիս կոլեկտիվը կարող է իրեն կից ստեղծել հանձնաժողովներ, վորոնք պարբերաբար վերընտրվում են և աշխատում են կոլխորհրդի ղեկավարութեամբ: Կոլեկտիվը ձգտում է ամբողջ աշխատանքը կատարել ողակի միջոցով: Բացի այդ կոլեկտիվին կից կամավոր հիմունքներով կարող են ստեղծվել խմբակներ, վորոնց մեջ ներգրավվում են նաև վոչ պիտոները: Այս դեպքում հանձնաժողովի նախագահները կամ խմբակների ավագները մասնակցում են կոլեկտիվի խորհրդի աշխատանքին:

7. Յուրաքանչյուր կոլեկտիվ կոչվում է «կոլեկտիվ ԼՎՅԵՄ (այսինչ) բջիջին կից»: Շրջաններում և գյուղերում բոլոր կոլեկտիվներն ունեն իրենց համարը:

8. Կոլեկտիվը կանոնավոր կերպով հրավիրվում է կոլեկտիվի հովաքներ ընդհանուր զրույցների, եքսկուրսիաների, կամպանիաներին մասնակցելու, ինչպես և կոլեկտիվի կյանքի բոլոր կարևոր խնդիրները, պիտոների ընդունելութեան և հեռացման հարցերը լուծելու համար:

Կոլեկտիվի բոլոր հիմնական վորոշումները հաստատվում են կոլեկտիվի ընդհանուր ժողովի կողմից:

III. ՈՂԱԿԸ

1. Կոլեկտիվի ամբողջ աշխատանքն ավելի լավ տանելու համար կոլեկտիվը բաժանվում է ողակների, ամեն մի ողակում 10-ական հոգի: Ողակ-

ները կազմվում են ըստ տարիքի՝ 10-11 տարեկան, 12-13 տարեկան, 14-15 տարեկան, ըստ զարգացման աստիճանի և ընկերութեան:

2. Ողակը պիտոներին ընտրում է մի ողակավար և ողակավարի ողնական, վորոնք վերընտրվում են 6 ամիսը մի անգամ:

3. Ողակը նշում է պիտոների համար հետաքրքիր և ոգտակար աշխատանքներ, առաջադրանք է տալիս յուրաքանչյուր պիտոներին, աշխատում է, վոր պիտոները սխտեմատիկ կերպով ստանան գիտելիքներ ու ունակութեաններ և ուղղութեան է տալիս այս կամ այն ոգտակար աշխատանքով հետաքրքրվող պիտոների կան խմբերին:

Բացի այդ, ողակը կոլեկտիվի խորհրդի առջընում է մի շարք առաջարկութեաններ և գործեր, վորոնք վերարբերում են ողակի կյանքին և կոլեկտիվի աշխատանքին: Ողակը աշխատում է իր բոլոր աշխատանքներին մասնակից դարձնել նաև վոչ պիտոներներին:

IV. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐ

1. Պիտոներ կոլեկտիվին կից կարող են կազմակերպվել 7-10 հոկտեմբերիկների ողակներ (աստղակներ), վորոնց մեջ ընդունվում են 7-10 տարեկան յերեխաները: Յուրաքանչյուր խմբի գլխին կանգնած է կոլխորհրդի կողմից նշանակված մի պիտոներ և նրան ողնելու համար հոկտեմբերիկներից ընտրվում է մի ողնական: Յեթե նույն կոլեկտիվին կից հնարավորութեան կա կազմակերպելու հոկտեմբերիկների 2-3 ողակներ, ապա նրանք միանում են

և կազմում են հոկտեմբերիկներ խումբ տվյալ կո-
լեկտիվին կամ բազային կից:

2. Հոկտեմբերիկներ խմբի ղեկավարությունը
հանձնվում է մի կոմյեբրտականի, վորը նշանակվում
է ԼԿՅՆՄ տեղական բջիջի կողմից: Այնտեղ, վոր-
տեղ մի ձեռնարկության կից կան մի քանի խմբեր,
ԼԿՅՆՄ բջիջը տալիս է հատուկ մի աշխատող, վորը
ղեկավարում է հոկտեմբերիկային ամբողջ աշխա-
տանքը տվյալ բազային կից:

3. Յուրաքանչյուր խմբի գլխին կանգնած է
հոկտեմբերիկների խմբի խորհուրդը, վորը բաղ-
կացած է խմբի ղեկավարից (խմբավարից), աստ-
ղյակավարներից և նրանց ոգնականներից: Խմբի
խորհուրդը մշակում է աստղյակների և հոկտեմ-
բերիկների հավաքի համար սահմանված նյութերը:
Խմբի խորհրդում մշտական նախագահ և քարտու-
ղար չեն ընտրվում:

4. Հոկտեմբերիկները պիտներական նշանի և
վզկապի փոխարեն կրում են հադուստի կրծքի ձախ
կողմը կարված կարմիր աստղ: Հոկտեմբերիկներին
պիտներության փոխարինելը կատարվում է կոլեկտի
վի խորհրդի վորոշումով, յերբ հոկտեմբերիկի 10
տարին լրանում է:

Հոկտեմբերիկները իրենց ուժերի չափով մաս-
նակցում են կոլեկտիվի բոլոր աշխատանքներին:

V. ՊԻՈՆՆԵՐՆԵՐԻ ԳՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՐՊՈՍԸ

1. Քաղաքային բոլոր դպրոցներում, վորտեղ
կան պիտներներ ԼԿՅՆՄ գանազան բջիջների պատ-
կանող կոլեկտիվներից, կազմակերպվում են Փոր-

պուսներ: Փորպուսները տվյալ դպրոցների պիտներ
և հոկտեմբերիկ աշակերտների միությունն է, վորի
նպատակն է կազմակերպված կերպով տարածել
պիտներական ազդեցությունը աշակերտների և
դպրոցի վրա:

2. Փորպուսը իրավունք չունի պիտներներ ըն-
դունելու և հեռացնելու պիտներկազմակերպությու-
նից:

VI. ՊԻՈՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԸ

1. Բոլոր կոլեկտիվները շրջանային, մարզա-
յին, հանրապետական և համամիութենական մասշ-
տաբով միանում են և կազմում պատանի պիտներ-
ների համապատասխան կազմակերպություն ԼԿՅՆՄ
կազմակերպության կից:

2. Պիտներ կազմակերպության գործնական ղե-
կավարության համար ԼԿՅՆՄ կոմիտեները իրենց
կից ստեղծում են պիտներական բյուրոներ, վորոնք
աշխատում են ՀամԼԿՅՆՄ կենտկոմի կողմից ջշակ-
ված հատուկ կանոնադրությամբ:

VII. ՊԱՏԱՆԻ ՊԻՈՆՆԵՐՆԵՐԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1. Պիտները հավատարիմ է բանվոր դասակարգի
գործին և Լենինի պատգամներին:

2. Պիտները թշնամի յե կուլակներին և բուր-
ժուաներին, — կողմնակից բանվորների ինտերնա-
ցիոնալին:

3. Պիտները բանվորների, գյուղացիների և ամ-
բողջ աշխարհի աշխատավորների յերեխանների հա-
վատարիմ բարեկամն ու ընկերն է:

4. Պիոնները կոմունիստի և կոմյերիտականի կրտսեր յեղբայրը և ողնականն է կոմունիզմի համար մղվող պայքարում:

5. Պիոնները պատրաստվում են դառնալ անձնագործ մարտիկ կարիքի և ճնշման դեմ, հանուն սոցիալիզմի:

6. Պիոնները ձգտում են ուսման և ոգնում են ուրիշներին սովորելու: Ուսումը և հմտությունը ուժ են բանվորական գործի համար մղված պայքարում:

7. Պիոնները կողմնակից են դիսցիպլինայի ուսման և աշխատանքի մեջ, նա պաշտպանում են հասարակական դուշերը:

8. Պիոնները խորհրդի, պրոֆսիուրիստի, կոոպերացիայի արթուն ողնականն են: Պիոնները Կարմիր բանակի բարեկամ-ողնականն են, նրա ապագա ռազմիկը:

9. Պիոնները պայքարում են գործարանների և ֆարրիկանների աճման, տեխնիկական գիտելիքների տարածման, աշխատանքային դիսցիպլինայի համար:

10. Պիոնները պայքարում են ազգամիջյան թշնամության դեմ, հանուն բոլոր բանվորների և աշխատավորների ինտերնացիոնալ մարտական դաշինքի:

11. Պիոնները չքավորի բարեկամն են, ակտիվ մասնակից բերքի համար մղվող պայքարին, կուսակցության, խորհրդակցության և կոմունայի ողնականը:

12. Պիոնները պայքարում են հարրեցողության և խուլիգանության, կրոնական թույնի դեմ:

13. Պիոնները յերեխաներին կազմակերպում և

համարում են Իլլիչի դրոշի տակ: Պիոնները որինակ են բոլոր յերեխաների համար:

14. Պիոններն ամեն ինչ անում են արագ և ճիշտ: Թանգ են գնահատում իր և ուրիշների ժամանակը: Պիոններն աշխատում, սովորում և հանգստանում են համերուշխ և կազմակերպված կերպով:

15. Պիոնները թշնամի յե կեղտի և ծխելու: Պիոնները պահպանում են իր և ուրիշների առողջությունը:

16. Պիոններն աշխատասեր և համառ են: Պիոնները չի վախենում դժվարություններից, միշտ տոկուն են և առույգ:

VIII. ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿՆԵՐԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

1. Հոկտեմբերիկները ձգտում են դառնալ պատանի պիոններն:

2. Հոկտեմբերիկները հետևում են իրենց մարմնի և հազուստի մաքրության:

3. Հոկտեմբերիկները սիրում են աշխատանքը:

IX. ՆՇԱՆ, ԲԱՐԵՎ, ԴԵՎԻԶ, ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄ

1. Սահմանվում է մի նշան ԽՍՀՄ ամբողջ պիոններկազմակերպության համար:

2. Բոլոր պատանի պիոններները կրում են կարմիր թաշկինակ փորպես վզկապ:

3. Սահմանվում է պիոններիական հետևյալ բարեր (սալյուտ). աջ ձեռքի հինգ մատները յեղծ միացրած բարձրացվում են դլխից վերև:

4. Սահմանվում է հանդիսավոր խոստման հետևյալ բանաձևը (Ֆորմուլան).

— Յեւ, ԽՍՀՄ պատանի պիոներ, ընկերներէ
առջև հանդիսավոր կերպով խոստանում եմ, վորք

1. Ամուր կպաշտպանեմ բանվոր դասակարգի
գործը ամբողջ աշխարհի աշխատավորների ազա-
տագրութեան համար նրա մղած պայքարում:

2. Ազնիվ և անչեղ կերպով կկատարեմ Իլյիչի
ավանդները—պատանի պիոներների որենքները,
պիոներների ղեկիզը—«Բանվորական գործի համար
մղված պայքարին յեղի՛ր պատրաստ»: Պատասխան.
«Ա՛իշտ պատրաստ»:

3. Կոյեկտիվն ունի կարմիր դրոշմի կողմը պիո-
ներական նշանը և ղեկիզը հեռեկայ մակագրու-
թյամբ—պատանի պիոներների №1, 2, 3 և այլն կո-
յեկտիվ այսինչ ձեռնարկին, հիմնարկին, գյուղին
կից:

4. Յուրաքանչյուր ողակ ունի յետանկյունաձև
կարմիր դրոշիկ կարմրազույն փայտով:

5. Պիոներները հագնում են միատեսակ տարազ:
Ամառը տրուսիկներ (աղջիկները սև գույնի յուրիա)
և բաց կամ գաշխտեի գույնի շապիկ ծալված ոճի-
քով և կրծքի վրա յերկու գրպաններով: Չմեռը պիո-
ներները հագնում են մութ գույնի տաք գիմնաս-
տյորկա:



80

№ 30 409.

Принципы строительства
Пионерской организации

СССР

Госиздат ССР Армении, Эриawan, 1934

« Ազգային գրադարան



NL0189609

